ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «20» հունվարի 2026 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 6-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուների կողմից ներկայացված հայտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը Հավելվածի սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը՝

1) հայտատու ֆիզիկական անձ Շահեն Շահինյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատուն, ի թիվս այլնի, գործունեություն է ծավալել գեոդեզիայի, քարտեզագրության և չափագրության ոլորտներում: «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և

մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեությամբ կարող են զբաղվել Կոմիտեի կողմից որակավորման վկայական ստացած անձինք: Մինչդեռ հայտատուի կողմից հայտին կից չի ներկայացվել գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության ոլորտներում որակավորում ունենալու փաստը հավաստող փաստաթուղթ: Հայտատուի՝ հիշյալ որակավորման բացակայությունը փաստվում է նաև Կոմիտեում առկա տեղեկատվությամբ, ուստի՝ հայտով և կից փաստաթղթերով չի հիմնավորվում Հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը,

2) հայտատու ֆիզիկական անձ Դավիթ Միրզոյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Դավիթ Միրզոյանի կողմից չեն ներկայացվել Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, հետևաբար՝ ներկայացված հայտով և կից փաստաթղթերով չի հիմնավորվում Հավելվածի 7-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը,

3) հայտատու ֆիզիկական անձ Գասպար Վեքիլյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Գասպար Վեքիլյանի կողմից չեն ներկայացվել հիմքեր և հիմնավորումներ Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքներին մասնակցության, կառավարությանը ենթակա մարմնի, մարզպետի աշխատակազմի կամ համայնքի կողմից ձևավորված, կառավարությանը ենթակա մարմնի համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներին վերաբերող աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվածության, ոլորտին առնչվող հարցերով միջազգային

կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ: Միաժամանակ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար՝ տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում,

4) հայտատու ֆիզիկական անձ Կարեն Մնացականյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Կարեն Մնացականյանի կողմից չեն ներկայացվել հիմքեր և հիմնավորումներ Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքներին մասնակցության, կառավարությանը ենթակա մարմնի կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվածության, ոլորտին առնչվող հարցերով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ, հետևաբար՝ ներկայացված հայտով և կից փաստաթղթերով չի հիմնավորվում Հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը,

5) հայտատու ֆիզիկական անձ Վլադիմիր Խաչատրյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Վլադիմիր Խաչատրյանի կողմից չեն ներկայացվել հիմքեր և հիմնավորումներ Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքներին մասնակցության, կառավարությանը ենթակա մարմնի, մարզպետի աշխատակազմի կամ համայնքի կողմից ձևավորված, կառավարությանը ենթակա մարմնի համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներին վերաբերող աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվածության, ոլորտին առնչվող հարցերով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության

վերաբերյալ: Միաժամանակ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար՝ տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում, ուստի՝ ներկայացված հայտով և կից փաստաթղթերով չի հիմնավորվում Հավելվածի 7-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը:

1/20/2026

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393